Գլուխ 05555556

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

17.12.52024թ .

<<ԷՎԵԼՊԻՍ>>ՍՊ ընկերության կողմից նախատեսվող փոքր հիդրոէլեկտրակայանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Հասցեն	Հեռախոսահամարը	Մասնակցի ստորագրությունը
1	Արկադյա Գալստյան			033 11 44 84
2.	Գեորգ Տոնոյան			099991957
3.	Հերմինե Ջերեջյան			077-66-88-31
4.	Արարատ Ավագ			094 05 35 00
5.	Հարությունի Բիդեա			098 188 969
6.	Լարա Մուշեղյան			095 883588
7	Աստղիկ Գրիգորյան			077 736163
8.	Գրիգորյան Արմեն			093 237160
9.	Բրուտյան Հովհան	Ջրառատ գյուղ		
10	Գեղամ Ավետիսյան	«Եռաբերդ» գյուղ		094-011220218
11.	Տիգրան Զաքարյան	«Հին Մարմարիկ» ԱՊՀ		098 550-887
12.	Ցոլակ Յաղուբյան			094 557910
13	Գրիշան Շուկուրյան			093 021708
14.	Արմեն Գրիգորյան	«Գիշերվան» ԱՊՀ		091 40 45 28
15				
16.				

Փոքրաչափ հիդրոէլեկտրակայանի նախագծի Ստեփանավանի ՊՀ տեսանելիության գնահատում

Հ. Հրդյան

Դ. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17.12.2024 ՀՀ Լոռու մարզ, Փամբակ խոշորացված համայնք, Վահագնաձոր վարչական միավոր

2024 թվականի, դեկտեմբերի 17-ին, ժամը 14:00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (երկրորդ լսում) ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձոր վարչական միավորի վարչական շենքում տեղի ունեցավ <<ԷՎԵԼ ՊԻՍ>> ՍՊ ընկերության կողմից նախատեսվող փոքր հիդրոէլեկտրակայանի նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:

Ելույթ ունեցան՝

1. Բացման խոսքով հանդես եկավ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձոր վարչական միավորի ղեկավար Է. Եղոյանը:
2. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը ներկայացրեցին ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ՇՄԱՓԿ) ՊՈԱԿ-ի փորձագետները, մասնավորապես փորձագետ Ն. Նասիբյանը:
3. Նախագծի տեխնիկական ցուցանիշները ներկայացրեց նախատեսվող գործունեության նախագծային և մեթոդական ղեկավարումը իրականացնող կազմակերպության տնօրեն Ա. Գրիգորյանը:
4. Նախատեսվող գործունեության բնապահպանական միջոցառումները և ընդհանրական լուծումները ներկայացրեց «Էկո Մենեջմենթ» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Նավասարդյանը:

Ներկայացվեց նաև ընկերության կողմից իրականացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկումների նախատեսվող համակարգը:

Հարցեր և պատասխաններ

- Համայնքի ներկայացուցիչը հարց բարձրացրեց կապված նախատեսվող գործունեության իրականացման տեղադիրքի, բնակելի տներից դրա հեռավորության և հնարավոր աղմուկի վերաբերյալ:
- **Պատասխանը** հնչեց, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ընկերությանը կառավարման և/կամ սեփականության իրավունքով պատկանող տարածքներում, նշվեց նաև, որ մոտակա կառույցից հեռավորությունը կազմում է շուրջ

30 մ, սակայն աղմուկի հետ կապված խնդիրներ չեն լինելու քանի որ կիրառվելու են եվրոպական սարքավորումներ, որոնք անաղմուկ են և չեն անցնելու թույլատրելի շեմը:

- Համայնքի ներկայացուցիչը հարց բարձրացրեց կապված առկա ջրերի քանակի և դրանց նվազման հետ:
- Պատասխանը հնչեց, որ Ընկերությունը արդեն իսկ ունի գործող ՋԹ, որի տրամադրումից առաջ լիազոր մարմինը ուսումնասիրել է տարածքում առկա ազատ ջրաքանակը, հաշվի է առել պահանջվող ջրաքանակը, որից հետո տրամադրել է ՋԹ: Նախագծողը ավելացրեց նաև, որ ըստ օրենքի պահանջի և նախագծի կիրառվելու են օնլայն ջրաչափեր ինչպես ջրառի քանակի, այնպես էլ մնացորդային ջրի վրա: Ուստի որևէ խախտում լինել չի կարող:
- Հարց հնչեց հնարավոր բնական աղետների և դրանցից- պաշտպանվելու վերաբերյալ:
- Պատասխան հնչեց, որ նախագիծը արվել է հաշվի առնելով խստագույն պահանջները, որը կապահովի մաքսիմալ կայունություն:
- Դեբետ գետի վրա ռաֆթինգային տուրիզմ իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները հարց բարձրացրեցին այն հնարավոր ռիսկերի մասին, որ կարող են առաջանալ ՓՀԷԿ-ի կողմից օգտագործվող ջրի ծավալի պատճառով:
- Պատասխանը հնչեց, որ նախատեսվող գործունեությամբ պայմանավորված ջրառը իրականացվելու և հետ է վերադարձվելու գետ մինչև Դեբետ գետ հասնելը, ուստի նրանց գործունեությունը որևէ ազդեցություն չի կարող լինել:
- Համայնքի ներկայացուցիչներից մեկը շատ ագրեսիվ դրսևորեց իրեն նշելով, որ ինքը դեմ է նախատեսվող գործունեության իրականացմանը, քիչ անց ավելացրեց, որ եթե գյուղի ստորին հատվածում գտնվող տները գազաֆիկացվեն ապա կարելի է համաձայնվել:
- Պատասխան հնչեց, որ դա կարող է քննարկվել նախաձեռնողի և համայնքի վարչական ղեկավարի հետ համատեղ և իրականում դա իրագործելի է:
- Համայնքի ներկայացուցիչները օրինակ էին բերում մեկ այլ ՀԷԿ-ի վատ աշխատանքը և նշում որ չեն թույլատրի նմանօրինակ աշխատանք:
- Նախաձեռնողի ներկայացուցիչները ևս հաստատում էին, որ ՓՀԷԿ-ը պետք է աշխատի բացառապես լավագույն ընդունելի ստանդարտներով:

Հախուռն քննարկումներն և հարցադրումները շատ էին, որոնք արտացոլվում են վիդեոնկարահանման նյութում:

Առաջարկություն

1. Առաջարկություն եղավ, որ դիտարկվի գյուղի ստորին հատվածի բնակելի տների գազաֆիկացման գործընթացին օժանդակությունարվի:
2. Առաջարկություն արվեց, որ ՓՀԷԿ-ի հարակից տարածքը, ջրամբարային գոտին կահավորվի այնպես, որ գրավիչ լինի տուրիստների համար և խթան հանդիսանա զբոսաշրջային տուրիզմի զարգացման համար:

Վահագնաձոր վարչական միավորի ղեկավար՝ Է. Եղոյան _____

Փամբակ խոշորացված համայնքի ղեկավար՝ Ս.Կոստանդյան _____

<<ԷՎԵԼ ՊԻՍ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ա. Ալեքսանյան _____